

- | | |
|--|--|
| 27. Իսթի.—ազգոսկորի կտրակ
զլուխը. | 30. Եղախաւքը. |
| 28. Թւլու.—Խնձորը գաւախոս-
կորին միացնող ջիւղը. | 35. Կեկէք.—կեռացքած մէկ թա-
թը. |
| 29. Զու.—Միանունը մտի. | 36. Զու.—երկու խա միանալով
կը կարծեն մէկ ձանկ. |
| 30. Գլու.—կամ խելու.—փափուկ միա. | 37. Խլի, գաստակ և բաշխակորը. |
| 31. Զիւ.—Սրունքի սակորը՝ ա-
ռանց մտի. | 38. Յաթու.—անութ ընդ անութ. |
| 32. Թաթի.—Սրունքը ձանկող
փափուկ միւր. | 39. Փեւ կամ Բիւ.—առտակորը. |
| 33. Մաթ.—վեղ ոսկորներու մաս
դանուած փոքր ոսկորները. | 40. Մոխրապանց—փոքրիկ պանդ-
ներ կենդանիներու ետեւի կողմը (չոր-
քատանիներուն). |
| 34. Սաթ (տաթի).—տաթի թափե- | 41. Պաթի.—քամակ. |
| | 42. Զու.—ողնաշար. |

ա) Գլուխը կը համարուի հոգու կայանք, այդ ցոյց կուտայ ար-
դէն Կեկէք բառը. զլուստ մէջն է նաեւ Խլի, և երբ մէկը ապուշ լի-
նի՝ կը կոչուի Գլուխ իրը շոգու նման խելքն ու միտքը (հոգին)
Գլուխ.

բ) Գանկապորներու կեռ զծերով միացած տեղը կանուանուի
ձիւթ 44 (նախաապկոր), որով նստուած զբաժն կը լինի մարդու գլխից
անցնելիք անէն շտ — Բիւ գաստաւորք կայն.

գ) Փա Իւթով ունեցողը խեռնոտ (խեռ, նախանձ) կը համարուի.

դ) Ալիքերէն շատը վատ է (զմենայ), որով ալ Իւթ (նազար)
առաջ կուգայ.

ե) Լուփի անհարթութիւնը առաջացեր է՝ Աբրահամի իւր Իսա-
հակ որդին կեանսորթ անելուց. դանակով կոկորդի մի ժաւը կը կտրէ
թէ լէ՝ հրեշտակը կարգելէ, բայց կէս կորուկուց Լուփ կառաջանայ.

զ) Սիւրը կը համարուի քաջութեան զգացման տեղը, օրինակ
եթէ մէկը քաջ է, կանուանեն Կիւ.

Հ Ն Տ Ո Ն Ե Կ Ո Ն Կ Ե Ո Ն Ք

Հնաանիք կը կազմեն 1) Կուք և Բբիւ իւրեանց կանան-
ցով, որդիներով ու թոռներով. 2) միայն եղբայրներ իւրեանց
կին և որդիներով և 3) հօգեղբայր և եղբոր որդիք. նոյն կերպ,
2—50 անձ:

Բուլանդիցոյ ընտանեկան կեանքի վրայ ակնարկ անելով երկու կարգի կենցաղաւարութիւն կը տեսնուի, մէկը Հին, նա-
հապետական, աջնիւ կեանքի շարունակութիւն, որ տակաւին
մինչև մեր օրերը մի քանի բազմանգամ տնկբու նիստ ու կա-
ցի վրայ կը տեսնուի, իսկ միւսը որ աւելի շատ տարածուած
է, առաջինի ազաւագեալ պատկերն է:

Առաջին կերպ կատարեալ 40—50 անգամներէն բաղ-
կացած ընտանիքի գլխաւոր տէրը և իշխողը տան ~~պէտք~~ հե-
րաւ կամ զոյգութիւն է, որ սովորաբար մի քանի որդոց հալը կամ
եղբայրներու աւագը կը լինի:

Տան ջոջաւորը երբ դռնից ներս կը մտնէ, իւր որդիքը
(եթէ հալը է գլխաւորը) կամ էշքայրէրը (կրբ ջոջաւորը տաղ
եղբայրն է) տղքի կը կանգնեն, ապա Հետ միասին հարաներ,
կանայք, թոռներ, ծոռներ, հաղն, ձեռք սրտի վրայ զբաժ-
լուռ ու մունչ նստա (ջոջաւորի) Հրամանին կոպտեն: Ամօթի
քօղը պատուած կը լինէր եղբայրներէն կամ ամուսնացած որ-
դիներէն մէկը, եթէ տան ~~պէտք~~ հերոսի ներկայութեանը իւր
կնոջ Հետ խօսի, որդին գիւղին առնէ և մեծաւորի առաջ կանդ-
նի. եղբայրներէն միայն անմիջապէս կրտսերը իրաւունք ունի
նստելու ջոջաւորներէ Հետ, միւսները մանաւանդ կանայք ամէն
մէկ ծակ ու ծուկ կը փախնեն իւրեանց որդոց և կանանց Հետ:

Այս պարագային ընտանիքի ջոջաւորը կարելի է նմանեց-
նել մի օտարական պատուելի Հիւրի, որու Հետ պէտք է յար-
գանքով և ակնածութեամբ վարուել մինչև որ անէն մեկնի:

Երկրի սովորութեան համաձայն, Հիւրասիրութիւնը պար-
տադիր լինելով Հիւրի Հետ ճաշելու և Հիւրը զբաղեցնելու իրա-
ւունքն ու պատիւը տան գլխաւորին կը պատկանի, միւսները
(եղբայր կամ որդի) ձեռք սրտի վրայ զբաժ սեղանին կը ծա-
ռային:

Կրտսեր եղբայրներու և որդոց ջոջաւորին տրած պատիւ-
ներէն մէկն ևս այն է որ նա ֆիզիքական աշխատութեան
չպէտք է մասնակցի, այլ միայն իրրու տան ներկայացուցիչ
ընտանիքի շահերը պաշտպանէ գիւղական իշխանութեան ժառ,
այդ պաշտպանութիւնը այն կերպ կը լինի, որ օրուայ ու գի-

շերտայ մեծ մասը գիւղական —եւթ ազան գտնուի, Հասարակական խնդրոց մասնակցի և եթէ ի վնաս իւր ընտանիքի մի որ և է վնիւս կը կայանայ՝ գիմազբութիւն անէ, խաւէ, վիճէ և վնիւս քանգիւ տայ:

Ընտանիքի իւր Զօջաւորին ցոյց տուած Հապատակութիւնը ոչ թէ բռնաթեան ալ ինքնաթափար սիրոյ արգիւնք է, որովհետեւ գլխաւորը իւր իշխանութիւնը իւր անձի ազտի Համար չգործածէ, այլ բազում տան ընտաւորին և, սորա մեծ ա վաքը տնդամը իւր խոնարհ ծառայութեան մէջ սրտի բաւականութիւն և պարտաւորութեան լրումն կը տեսնէ. «Ո՛ր (ո՛ր) որ դուք մեծ չնանչնայ զՆստուած լէ չնանչնայ», կասն գիւղացիք, և թէ ւտեղ մ որ մեծ չեղնի քարմէ (մի) պէտք է գնին էնին մեծ»:

Բայց և այնպէս նախապետ Զօջաւորի իշխանութիւնը ոչ այնքան սրտի որքան մաքի վրայ կը ներգործէ. աթ թերին կուգայ լրացնել «տնտէր» (տանտիկին), որ սովորաբար Զօջաւորի կինը կը լինի. մինչ առաջինը պատկառանք կազգէր, վերջինս ո՛ր կը ներշնչէ, առաջին իշխանութիւնը «բաւ» է, վերջինս ներքին. իրաւունքով կասն գիւղացիք. «մարդ գրտադատ է, կնիկ ներսին»։ աթ առածը կարգարտնայ ընտանիքի արական անդամոց վերաբերմամբ ընդհանրապէս և, տան Զօջաւորին, մասնաւորապէս: Ճիժ, երեխայ, տղայ, աղջիկ, Հարս կնիկ և մինչև ամուսնանալու Հասակն ունցող երիտասարդները արտերնին տանտիկին մօր առջև կը բանան, գազտնիք նորանից չթաղցուի, եթէ գլուխ ցաւի, նորան կը բարեննի. եթէ անթեման՝ Հաց նորանից կը խնդրեն: Մինչ տան Զօջաւորը Ֆիզիքական աշխատութեան չմասնակցեր, տանտիկինը գարմանալի Համբերատարութեամբ օրն ի բուն ոտքի վրայ կանգնած ընտաւորի ամէն կարիքին բաւականութիւն կուտայ. երեխայի լացը կտրող նա է, Հիւրին սեղան պատարասող, բանտր, մշակ, կին, մարդ ջոկ ջոկ կերակրողը նա է. Հարսներին ոչ ոք իրաւունք չունի և առանց նախանշելու, տանտիկին մօր յարսնած իւղին, պանրին, թան ու թացանին մօտենա-

լու: Ընտանիքը այս պարագային կուզէ յարգել այս ճշմարտութիւնը չթէ մէկ ձեռք Բարան (օրհնած) է:

Ինչպէս մարդիկ դուրսը, նոյնպէս և կանայք ներսը աշխատութիւնը թէև խմբովին կը կատարեն, բայց աշխատութեան տեսակը բաժանուած է անգամայ միայ, առաջիններուն դաշտը կը հսկէ բանւորներու աւագը (ոչ թէ քոջատորը), իսկ ներսը տանտիկինը: Դարձ կամ աշխատութիւն որովհետև միութեամբ և հնազանդութեամբ առաջ կերթայ, գարուն բացուելուն պէս առաջիններէն մէկը հօտայ է, միւսը մանկայ, մէկը ցանաղ ու վարող ու միւսը քաղող, երկրորդը կտրող, երրորդը փոցիող, չորրորդը կրող ու ծնծող կապն: Երկրորդներէն (կանայք) մէկը գունդ ու գրգնակ անող, միւսը խմոր շաղող, երկրորդը ոչխար ու տաւար կթող, երրորդը ձնամ զարկող կապն:

Նոր բերած հարսի պարտականութիւնն է երեկոյ առաւօտ, տան տախտ (յատակը) աւելելը, Զէի (աղբի) թտփելը, առաւօտը քնից վերկնցողներու ստնամանները պատրաստ պահելը, անկողինք վերցնել ու դարսելը, լուացւալներու ձեռաց ջուր անելը կապն կապն. և այս ծառայութիւնը կը տեւ որքան մի ուրիշ նոր հարս բերուած չէ:

Նոր հարսը չպէտք է խօսայ իւր սկեարայրի հետ ցմահ, կեսուրի հետ մինչև 1—2 օրդի բերելը, տէգրերու հետ մինչև 10—15 տարի և երբեմն մինչև խորին ծերութիւնը. տալերու հետ 5—6 ամօից մինչև մէկ տարի. բաժան դասերու (մարդու ազգականներու) հետ մինչև 10—15 տարի (միայն մարդոց): Ընտանիքից ու զերգատտանից զարս ամէն կին ցմահ, իւր կնքաւորի հետ ոչ միայն խօսալու սովորութիւն ու իրաւունք չունի, այլ և ներկայութեան ելնելը մեղք կը համարուի: Նոր հարսները պարտաւոր են նաև դրացի ծերերու պատիւը պահելու համար, իբրև իրենց սկեարայրի հետը չիստել 5—6 տարի: Երս պարտաւորութեանց ու սովորութեանց անթերի կատարուելուն կը հսկեն տան քոջատորը, տանտիկինը և սովորաբար շատ ու քիչ տարիքատ ընտանիքի ամէն մէկ անդամը, մեծը փոքրին հսկելով:

Կանցնին օրեր ու տարիներ, քոջատը նահապետի ու տան-

տիկինն ժօր կեանքի արևը կը խոնարհի գէպի մուտքը, ծերութեան պատճառով ոյժ և ընտանիքը առաջնորդելու ընդունակութիւնը կը կորսնցնեն, բայց յորգանքն ու պատկառանքը նախ կը մնայ: Կը կանչեն նաշապետն ու մայր տիկինը ընտանիքի ամենաընդունակ տղան (եղբայր կամ որդի աւագութեան օրէնքով) և մեծ հարսը (սոցանից մէկն ու մէկի ընտանիքը) և վերջին օրհնութեան հետ կը յանձնեն նաեւ տան կառավարութեան զեկը նորընտիր յաջորդին, այնուհետեւ հոգով և մարմնով ընդ միշտ հանգստանալու:

Այս կերպ կառավարող ընտանիքներ այնքան փոքր թիւ մի կը կազմեն որ ընդհանուր գաւառի մէջ մասնեկով կարելի է ցոյց տալ:

Ընտանիքը արդ օրինակ կառավարող սովորութիւններէն մեծ մասը այսօր խանգարուած կը տեսնենք. որդիք և աւհասարակ ընտանիքի մեծ ու փոքր ամէն մի անգամը, իւրեանց պարտականութիւնը կատարելու մէջ կը թերանան. հին կարգերու խանգարուելովը և նոր կեանք մի սկսելու համար որոշ օրէնք ու սովորութիւնք չլինելով, ընտանիքը կործանման—չուսով բաժանուելու հարկին կենթարկուի: Գորա ինչպէս և ամէն չարիքի գլխաւոր պատճառը պանդխտութիւնն է: Տգէտ գիւղացիք պանդխտելով մեծ և բազմամարդ քաղաքները, տեսնելով քաղաքի համարձակ նիստ ու կացը, քաղաքացի տղայի ազատ վարժուելը իւր ծնողաց հետ, պանդխտ գաւառացին ևս նոյն համարձակութիւնը կուզէ մտցնել իւր զանից ներս. կը տեսնէ որ քաղաքացին հարուստ է, իւր աշխատութեան մեծ մասը կը ծածկէ ծնողներէն տաանձին զբամազուի շահեցնելու համար:

Երբեմն պանդխտութեան վաղըրէն նամակ կուղղուէր միայն յարգելի պապուն մամուն, այժմ պապուց մամուց յետոյ կիսն ևս կը յիշուի, մինչդեռ հօր ներկայութեանը ոչ միայն կնոջ անուն տալը, այլ կշտին կանգնել, գէմ ու գէմ կնոջ նայելը մեծ ամօթ կը համարուէր:

Տան Զօջաւոր հայրը թէև իւր ընտանիքի գլխաւորն է, բայց նորա իշխանութիւնը լսկ անուանական է, և իրենց պար-

տակահաճութեան սահմանից անցնող անհնազանդ որդիքը զժառարութեամբ կը կարողանայ զսպել: Կարելի է ցոյց տալ այնպէս ընտանիքներ, որ եղբայրները իրենց հօր կենդանութեան ժամանակ մէկ յարկի տակ փոքրիկ ընտանիքներ կազմելով իրենց որդւոջ և սեղակական շահերովը կը կառավարուեն և երբեմն հայրը չմտած կը բաժնուեն մէկմէկից:

Քանի որ հայրը դեռ առողջ է, այնքան զժառարութիւն չկայ ընտանիքը կառավարելու, բայց երբ ուժից և կարողութիւնից կը զրկուի, այդ պարագային կը նմանի երեխայի, որու ապրելը կախուած է ծնողաց հստութիւնից. արհամարհուած և լքուած օրուայ մեծ մասը ախոռի և տան զլուիը իւր մնացորդ օրերը կը համարէ խնդրելով Աստուաց որ իւր ամանակին (հոգիին) շուտով առնէ, զգալով որ ընտանիքին մի աւելորդ բեռ կը նկատուի իւր գոյութիւնը: Որդոց այդ տմարդի վարմունքը ծնունդ տուած է հետեւեալ առաւել, «Աստուած տալ լաքուն որ տալ ձազուն»։ ասել ուզելով, թէ Աստուած ձազին (որդուն) որ տալ՝ ձազ լաքը (ծնողքը) չի խնամիր:

Ընտանիքի այսպէս առած ալը մարդոց կամ արտաքին կենցաղավարութեան կանոնները նոյն ինքն իրենց մարդկիւր, խանգարել ջանալով, ներքին կամ որ այն է կանանց նախկին համակրելի միութիւնը քանդուած, համերաշխութիւնը եղծուած և տանտիկիւններու իշխանութիւնը սահմանափակուած կը տեսնենք:

Այս զեղծումներուն բնականաբար հանդիսատես է փոքրիկ սերունդը (աղջիկ և տղայ), որոնք իւրացնելով հայրերու մաքրերու և իրենցից մեծերու տղեղ սովորութիւնքը, պէտք է ապագային ընտանիք կազմեն միևնոյն ուղղութեամբ. թէև աղջիկները հերանց տան վէճերուն չեն մասնակցեր, որովհետև գիւղացի աղջիկը իւր հօր օջախի մէջ իբրև «հիւր» կը զգայ ինքը զինքը, մտածելով «թէ այսօր կամ վաղը չկամ»։ Բայց որովհետև գիւղացոց ամուսնութիւնը վաղաժամ կը կատարուի մանաւանդ մեծ ընտանիքներու մէջ, լրնթացս մի քանի տարիներու բաւական թուով երիտասարդներ կամուսնանան և օջախի մէջ կը մտնեն տարբեր կազմուածքի և բնաւորութեան

տէր բոլորովին տղէս և անկիրթ աղջիկներ, որոնք երէկ ընդհարեալ աղջիկներ էին, բայց աբար հորն և շնորհիւ Հարսնութեան իրաւունքի տէր են: Աւանդական բազմիւ տակ Համարելով Հարսնութեան օրերը, որից երբ կանցնին ինքեան շրջանը, ընդարձակ ասպարէզ կը բացուի առաջները օրինական ազմուկ, վէճ, կռիւ և խռովութիւն Հանելու: Արծարծելով վէճը կանցնի կանանց շրջանից մարդոց շրջանը և ահա շամենայն ինչ կատարեալ է:— Բաժանումն անխուսափելի է:

Բաժանման գլխաւոր պատճառները

Ընտանիքի բաժանման սկիզբը գլխաւորապէս կանայք կը գնեն, երբեմն ևս մարդիկ. վերջիններս գիւղական ծանր աշխատութեան ենթարկուած լինելով Հաւաքական ոյժի, ընկերակցութեան և միացած ձեռքերու կարօտ են. այդ միութիւնը գիւղական կեանքի պարզ Հետեւանքն է: Կանայք խմբուած լինելով տան մէջ և մանաւանդ բծախնդիր բնաւորութիւն ունենալով, ինչին բաներու առիթով վէճ ու կռիւ Հանելու առիթներ շատ կ'ունենան. այդ վէճերը երբեմն այնքան սուր կերպարանք կտանան, որ մարդիկ ուրիշ միջոց չգտնելով Արարածի և Ղովտի նման եղբայրական խաղաղ առաջարկութեամբ կը բաժնուին իրարմէ. երկրորդ և ամենամեծ պատճառը դեռ Հօր կենդանութեան ժամանակ որդոց առանձին դրամ պահելու և Հարսնութիւն գիղելու ամենալատ սովորութիւնն է (սարմիա): Տեսանք ինչպէս որդիքն Հիմքը կը գրուի:

Սարմիան կանի ոչ միայն իւր քերած շահովը, այլև շատ անգամ տնից զոցուած և ծածուկ ծախուած զանազան առարկաներու գնովը, որ բնականաբար օւնեցողի և չօւնեցողի մէջ շուտով կարող է խռովութիւն սերմանել: Ինչ կը նշանակէ օրինակի Համար երբ երկու եղբայրներ տան ամէն ծառայութիւնքը կատարելով Հաւասարապէս քրտինք թափեն և, մէկն ունենայ 40—50 օսմ. ոսկի, ^{*)} իսկ միւսը բնաւ չունենայ. մէ-

^{*)} Դիւղացի որդիք տէրեր 10 օսմ. ոսկուց սկսած 100—200 ոսկուց ունի լին օւնենար. որոս նմա քանի գլուխ ուրար, եզ, մատակ և այլն ունեցողներն էլ կը լինեն:

կի ամուսինն ու որդիքը սարժիպի շնորհիւ լաւ հաղնուած ու զարգարուած լինին՝ միւսին բոլորովին մերկ. երբ տան քոջաւորը պարտաւորուած իւր սարժիպ ունեցող որդուց փոխարինարար գրամ վերցնէ և ինչպէս մի օտարական շուրջ հընչումն զբամով կամ համարէք ընդեղէնով տոկոս տալ...

Դրամատէր եղբայրները առաջուայ նման սիրով և շարտացաւանքովն չեն աշխատեր տան օգտին, չիմ ու քումս-ի հետ ծուլութիւնն ու անտարբերութիւնը կը մտնեն զոնից ներս, և քանի հատ ոսկի ունեցողի համար ալիւս տան շէն կամ աւեր մնալը հոգ չպատճառեր, որովհետեւ փտաւէ է (սարժիպի տէրը) որ եթէ տունը քանդուի (քաժանուի) էլ, ժառանգութեան մի մասին զոնէ տէր է ինքը և պատրաստի զբամովը կարող է նոր շտուն ու տեղն զնել և ապրել թերեւս առաջուանից աւելի լաւ:

Գ. Բաժանման պատճառ կը դառնան նաեւ ինչպէս գիւղացիք կանուանեն չխորթ ու մաբանները^{*)}, ալիւնքն երկրորդ կամ երրորդ կանայքը, որոնք հարսներու և աղայոց մէջ խռովութիւն սերմանելով տները բաժանել կուտան:

Դ. Բաժանման իբրեւ երկրորդական պատճառներ են երբ հայրը որդիներէն մէկը շատ կը սիրէ և կաշխատի ընդհանուրի ժառանգութիւնից մի նշանաւոր արտ, կալուածք (ջրաղաց և ալլն) նուիրել սիրած որդուն:

Ե. Երբ եղբայրներէն մէկը շատ որդիք ունենայ և միւսները ոչ, չունեցողները կուգն շուտով բաժանուի, որպէս զի իրենց պատկանած ժառանգութիւնը չվատնուի յօգուտ բազմաթիւ որդիք ունեցողին և ալլն և ալլն:

Հետևիմքի անգլանց անունները ըստ սեռի և մասակի. Նշանուած աղջիկ ու տղան (զեւ չպատկուած) կը կոչուին *Զուտ*, *Զուտ*, պատկուելուց յետոյ՝ աղան *Ժու*, և աղջիկը *Ժու*, *Ժու* (փոքրաւոր), երկուքը մէկանց՝ *ժու* կամ *Էթի* ու *Բիլ* (աղջիկ ու կնիկ), Երկրորդ... անգամ պատկուած *Ժու* ~ *Զու* կը կոչուին *ԴժԺԺ* (որը և ալլն):

*) Պարտ կամ խորթ մայր:

Փետացի հայրը կը կոչուի հարսին՝ Ինչի (սկիսարար), մայրը՝ Ինչի (սկիսուհի), եղբայրը՝ Բեհ (տաղը), քույրը՝ Բեհ (տաղ), սոցա որդիքը՝ Բեհի կամ Բեհի Բեհ (ազգականի և սեռականի կամ տրականի մէջ կը ընդունի)։

Հարսի հայրը կը կոչուի փետացին Բեհ, մայրը՝ Բեհի (զոքանը), եղբայրը՝ Բեհի, քույրը՝ Բեհի, երկու քույրեր աւելոյ փետաները կը կոչուին մէկմէկու (տանի) Գանա (քննեկալ)։

Հարսի և փետացի ծնողքը, եղբայրները, քույրերը, և բոլոր արական և իգական սեռի ազգականները կը կոչուեն իրարու քուհի։

Որդին իւր հայրը կ'անուանէ Գու, իբրև կոչական՝ արու (քրդ-) կեհ, հուր՝ դաղ է, պաղու, թոքապ, մայրը կը կոչուի Բեհ իբրև կոչական ժամու, մա, մարէ, մէրիկ, նանէ, նա, Զոր և մօր մայրը՝ Բեհ, Էփի, Գաղէ (քրդ-) (մօր եղբայրը և քույր սոցա արու ազգականները Բեհ)։ Զորեղբայրը՝ Զուհի, սոցա կ'ենը՝ Զուհի, սաստոյ որդիք՝ Զոգ-բոր Բեհ, Զուհի Բեհ։

Հնամենիք իրաւանները, Հնամենիք կազմոյ եղբայրներ կամ Զոր եղբայր ու եղբոր որդիք կը կոչուեն (տան) Զոր (քննիք), որոնք զեռանական օրէնքի ուժով և աւանդական սովորութեամբ հաւասար ժառանգներ են, ժառանգութիւնը ժառանգներու թուոյն համեմատ հաւասարապէս կը կիսուի։

Ինչպէս բնականօրէն ազգեցութիւնը և պատիւը բարձր պահելու համար զիւրեքու մէջ, զիւրացին՝ բացի ուրիշ յարգելի պատճառներէն կը սիրէ համախորհել (2—40—50 անգամ) մէկ յարկ տակ, նոյնպէս և երկրի մէջ նոյն ազգեցիկ զիւրքը ձեռք բերելու նպատակով՝ փոքր եղբայրները՝ մեծից բաժանուելու ժամանակ չզգուտ տրան մի կարգ զիջողութիւններ կանեն, որպէսզի պապական զբախը միշտ շէն ու պայծառ մնայ։

1) Եւն լեռնանման մեծ, սրածայր և 4—500 գերաններով կազմուած տունը, ուր 40—50 անձ կը բնակէր առաջ, կը թողնեն մեծ եղբոր իբրև կանգնած զբախ, իսկ իրենք նոր տներ կը կանգնեցնեն, առաջինը կանուանեն Դեհ Բեհ, իսկ իրենցը Բեհ Բեհ կամ Բեհ Բեհ։

2) Որպէսզի զբախին զիմոյ ամէն մէկ Հիւր առաջուայ նման Հիւրապրութի, ուսէ, խմէ և զբախ անունը բարձր մնայ, ընդհանուրի ժառանգութիւնից կը յանձնեն մեծ եղբոր տան Դեհ Բեհ (Հիւրապրութի) իւր Բեհ Բեհ, օգային կից արտաք և օգայի տարքը—փառամար կայն։

3) Հնդկանորի ժառանգութիւնից օգայի նախընտրան կը շատ կազուին մի Գու, 10—20 գլուխ ուլաք, 1—2 ձի կայն։

Պես լրատուած՝ երբ եղբայրներէն մէկին 2—3 արու որդիք

ամուսնացուին, որոնց համար անից կը հոգացուի իւրի նախըր, բա-
ժանուելու ժամանակ խալանը ի նկատի կառնուի, և նոյնքան գու-
մար կը թողնուի որդիք լամուսնացնող եղբոր, եթէ այս գիշրու-
թիւնը կամքով տեղի չունենայ, օրէնքին դիմելով պահանջել կու-
տան:

Արտեր և մարգերը եթէ գոյգ թուով են՝ հօդ (համարժէք) անելով կը բաժնուեն. կծո (կենտ, կռատ) մնացած արտը հօդով կը
կիսուի. Արտ արտի հետ համարը դրած ժամանակ՝ պէտք է մեծ եր-
բայք թիւ և փոքրը ծախ, յետոյ ուրիշ երկու համար արտ պէտք է
փոքր եղբայրը թիւ և մեծը վերցնէ փոփոխակի մինչև վերջը:

Քաժանուելու ժամանակ պատրաստի գտնուած արմուխը, պաշար,
մարտիկ (նպար), իւր, պանիր, բուրդ և այլն ոմանք անմի թուոյն
համեմատ կը բաժնեն, և այդ մեծ աղնութիւն կը համարուի, իսկ
ոմանք (նոր տերունիքը) շտիթ թուոյն համեմատ: Ցան պարտքը նոյն-
պէսիկ առ կէս կը բաժնուի, բայց եղբայրներու աւելած անձնութիւնի է:
Անասունները նոյնպէս հօդ, անիւղով կը զնեն ու կը վերցնեն-
իսկ անան-լամանները շէրիքներու թուոյն համեմատ կը բաժնեն:

Հայրը որդաց ժառանգութեան մէջ բաժին չունի, բայց որդիք
պարտաւոր են ցմահ պահել և պատուել:

Իգական սեռի ժառանգները (քոջեր) արականներու հետ (եղ-
բայրները) օրէնքը թէ և հաստար իրաւունքի տէր կը նանայէ, բայց
ազգաւորութիւնը առաջինները զրկած է իրենց իրաւունքներից. մեծ ա-
մօթ ու անաղնութիւն կը համարուի եթէ հօր անցմանից յետոյ քոյր
մի իւր եղբայրներէն ժառանգութեան մասն իտեղէ, եթէ՝ մինչև
անգամ աննաթշուա գրութեան մէջ էլ չին (ամուսնացածը), եթէ
ազաւ է՝ հիւրի նման իւր հօր տունը կապրի մինչև ամուսնանալը, և
եթէ ամուսնացած է, իկտոր մի հայ գտեր է գնացեր յետև. կասեն
զիւղաջիւք:

Իգական սեռի ժառանգը իւր հօր ժառանգութեանը կուգէ տի-
բանայ, 1) երբ հօր արու ժառանգ չմնայ. 2) երբ մերժաւոր ազգա-
կան էլ չունենալով ժառանգութիւնը պիտի անցնի գերդաստանի հե-
ռաւոր հիւրի մէկ կամ մէկ քանի անդամներու: Արդէնեւս զի ու
հօրուի կը համարուի եթէ աղջիկը մերժաւոր ազգականներու, իւր ժա-
ռանգութեանը տիրապետելուն ընդդէմ ևս բարդ ու պահանջ կը
հանէ: Մինչ հայերը զաւթի անուան տակ իգական սեռը կը զրկեն
իւր իրաւունքներից. քաղցը իբրև բնական օրէնք, աղջիկը բացէ
բաց զրկած է հայրական ժառանգութիւնից: Այդ օրինակ օրէնքի ու
աղնութեան այնքան ընտելացած է իգական սեռը, որ անի լաւ կը
համարեն եթէ իրենց ժառանգութիւնը արմակից ազգականներուն

մնայ քան թէ օտարի (անուսինների) տղայոց. 30—40 տարի ամուսնութեան օրից անցնելուց և բազմաթիւ որդիք ունենալուց յետոյ էլ կենարատաներաւ Մուշ (սէրը, համակրութիւնը) հէքանց և արեւակցաց կողմն է. այդ յատուկ է այս կողմի հայ և քուրդ իգական սեւերն:

Ժառանգութիւնը օտար սերունդի կանցնի չորս-հինգ միջոցով. երբ օջախին արու ժառանգ ըմնայ, տնօրեան կը ժառանգէ աներոջ շարժական և անշարժ գոյքը. եթէ տնօրեայի կնոջ մէկից անկի քոյքեր լինին, ժառանգութիւնը հաւասարապէս կը բաժնուի անօրեայի և իւր կնոջ (կրթե մէկ ժառանգի) և միւս քոյքերու վրայ:

Որդեգրութեան դէպքեր անսնտան չեն, հետեւապէս և այս մասին մի որեւէ սովորութիւն կամ օրէնք մեզ ճանօթ չէ:

Հիւանդութիւնն և գիւղական նաւերը.—Բացի մի քանի համաճարակ հիւանդութիւններից, որոնց գիւղական ժողովուրդը տալ (ցատամ, Լատունայ բարկութիւն) անունը կուտայ, միւս բոլոր հիւանդութեանց համար մէկ մէկից սովորելով և փորձելու վրայ հիմնուելով, զեղ ու դարձան գտած է նա, որոնց մեծը Գրեթե Երէ անունը կուտանք:

Ճարկից մի մասը, ինչպէս ասինք, ժողովուրդը պատահական բժիշկներից կը սովորի, մի քանիսը նոյն խի կենդանիներից. օրինակ շատ ժողովի ականատես եղեր են որ ողնին օժու մի կերտն ժամանակ՝ փութով կը վազէ և Երեթի կամ Եւմի կոչումն բոյսի թուփերը կուտէ, որպէսզի լուսի և յապթի, ինչպէս փորձուած է. և այդպէս, ժողովուրդը վերքի ժաշը և զեղումնի թոյնը թափելու համար թորթիկ կը գործածէ. կարինի խայթուածը առողջացնելու համար խրանգատի (*Verbascum thapsus*) թուփը կը զնէ վերքի վրայ: Չատ նաբերու սիւնը պատահամբ գտած է. այդպէս երբ գիւղացին արաք վաբելու ժամանակ արօրի խոփով գածէջի օտքը միտաւորէ, խօնցն կը Մի վերքի վրայ և աջող արգիւնք կուեննայ, եթէ մեռքը միտաւորէ, կամ այլան շորի մօրօր և կամ սարդի աստայն կը գործածէ և արգիւնքը զարմեայ աջող կը գտնէ. վերքի ուռոյցը (նախքան պատուանդը) շուտով հասցնելու համար տաւարի թրիքը միթով կամ խնօրի կտորը խլով շարժելով վրան կը կապեն, վերքից թարսն ջնել տալու համար, եղան լեզու (*plantagomedica*) կամ կաղամբի թուփ կը գործածեն:

Բուսական առաջ գնացած է միւրաբուժութիւնը, որով դարապողները աջողութեամբ մարդոց և անասնոց կտորած ոտք ու մեռքը